

Բաց Բաժնետիրական
Ընկերություն



Акционерное
Общество Открытого Типа

“Իջևանի Բենտոնիտ Կոմբինատ” ԲԲԸ
АООТ «Комбинат Иджеванский Бентонит»

4003 Հայաստանի Հանրապետություն
Տավուշի մարզ
Գյուղ Ազատամուտ
Հեռ. (+374) 93 39 88 44
E-mail: Idjbentonite@mail.ru

ՀՀՐԵՍՊԱԿԱ ԱՐՄԵՆԻԱ
Կավուշկայա մարզ
Սելո Ազատմուտ
Կառ. (+374) 93 39 88 44

Բ - 282
_____2013թ.

ՀՀ բնապահպանության նախարար
պարոն Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Խնդրում եմ Ձեզ քննարկել նախարարության կայքում տեղադրված

«Իջևանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ սահմանային թույլատրելի արտա-

նետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծը և տալ արտանետման թույլ-

տրվություն:

Կանխավ շնորհակալություն

Խորին հարգանքով

Գլխավոր տնօրեն



Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

«ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ
սահմանային թույլատրելի արտանետումների
(ՍԹԱ) նորմատիվների նախագիծ

Գլխավոր տնօրեն



Երևան -2013թ.

Կատարողներ

Քիմիկ ինժեներ (Էկոլոգ), ք. գ. թ.

Ս. Եղոյան

Գլխավոր տնօրենի առաջին տեղակալ

Վ. Աթայան

ԱՆՈՏԱՑԻԱ

Ուսումնասիրության օբեկտ է հանդիսանում «Իջևանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ կողմից առաջացած արտանետումները:

Աշխատանքի նպատակն է՝ մշակել «Իջևանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ կողմից առաջացած և մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծը:

Նախագծում բերված են ընկերության կողմից արտանետվող վնասակար նյութերի ինչպես քանակական, այնպես էլ որակական նկարագիրը:

Հաշվառումներից պարզվել է, որ ընկերությունը ունի մթնոլորտի աղտոտման Ցաղ-բյուրներ, որոնց կողմից մթնոլորտ են արտանետվում տարեկան 166,41 տոննա քանակով աղտոտող նյութ, որից՝

- անօրգանական փոշի- 122,04տոննա
- ածխածնի օքսիդ – 34,06տոննա;
- ազոտի օքսիդներ վերահաշվածերկօքսիդի – 8,92 տոննա
- ածխաջրածիններ,- 0,80տոննա;
- կախյալ մասնիկներ - 0,5924 տոննա,
- մանգանի օքսիդներ- 0,0028տոննա:

Նշված նյութերը գումարային հատկություն չունեն:

Նշված նյութերի ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամկետը 2013թ. է:

Ընկերության կողմից վնասակար նյութերի արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին պատճառած վնասի մեծությունը հաշվարկվել է ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 25-ի N91 որոշման հիման վրա, որը կազմում է՝ 5,65մլն.դրամ:
Յուրաքանչյուր աղբյուրի համար տնտեսական վնասի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \sum_{q} \Phi_{q} \sum_{i} \Psi_{i} \Phi$$

որտեղ՝

U –ն –ն ազդեցություն է, արտահայտված դրամներով,

\sum_{q} - ն աղտոտող աղբյուրի շրջապատի բնութագիրն արտահայտող գործակից է, որը հավասար է4-ի;

Ψ_{i} – i- րդ նյութի համեմատական վնասակարությունն արտահայտող մեծություն է՝

Ք –ն տվյալ i-րդ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է;

Φ_3 –ն փոխադրման ցուցանիշն է և հավասար է 1000 դրամի:

Φ_i – ի գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Phi_i = q (3 S U_i - 2 U \Theta U_i)$$

Որտեղ՝

$U \Theta U_i$ –ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է տոննաներով;

$S u_i$ -ն i-րդ նյութի փաստացի արտանետումն է տոննաներով;

$q = 1$ –ի անշարժ աղբյուրի համար:

Անօրգանական փոշի – 122,04 տոննա;

$$U_1 = 4 \times 1000 \times 10 (3 \times 122,04 - 2 \times 122,04) = 40000 \times 122,04 = 4881600 \text{ դրամ};$$

Ազոտի օքսիդներ – 8,92 տոննա

$$U_2 = 4 \times 1000 \times 12,5 (3 \times 8,92 - 2 \times 8,92) = 50000 \times 8,92 = 446000 \text{ դրամ}$$

Ածխածնի օքսիդ – 34,06 տոննա;

$$U_3 = 4 \times 1000 \times 2 (3 \times 34,06 - 2 \times 34,06) = 8000 \times 34,06 = 272480 \text{ դրամ}$$

Ածխաջրածիններ – 0,8 տոննա;

$$U_4 = 4 \times 1000 \times 3 (3 \times 0,80 - 2 \times 0,80) = 12000 \times 0,8 = 9600 \text{ դրամ}$$

Կախյալ մասնիկներ – 0,5942 տոննա;

$$U_5 = 4 \times 1000 \times 19,6 (3 \times 0,5942 - 2 \times 0,5942) = 78400 \times 0,5942 = 46444,16 \text{ դրամ}$$

Մանգանի օքսիդներ – 0,0028 տոննա;

$$U_6 = 4 \times 1000 \times 705 (3 \times 0,0028 - 2 \times 0,0028) = 2820000 \times 0,00028 = 789,6 \text{ դրամ}$$

$$\text{Ընդամենը՝ } U = 4881600 + 446000 + 272480 + 9600 + 46444,16 + 789 = 5,65 \text{ մլն. դրամ}$$

Տրամադրված չափաքանակները մնում են ուժի մեջ, քանի դեռ աղտոտման անշարժ աղբյուրների և աղտոտող նյութերի մասով քանակական կամ որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև տվյալ նյութերի ֆոնային գերնորմա-տիվային աղտոտվածություն չի առաջացել: Ֆոնային գերնորմատիվային աղտոտ-վածության առաջացման հետ կապված արտանետման չափաքանակները վերանայվում են տրամադրման պահից 5 տարվանից ոչ ուշ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԱՆՈՏԱՑԻԱ	2
	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	4
	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
1	ԸՆԴՀԱՆՈՒՐՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	6
	ՕՊՕ –ի ՀԱՇՎԱՐԿ	7
	ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ ՄԽԵՄԱՆ	8
	ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՔԱՐՏԵԶ ՄԽԵՄԱՆ	9
2	ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՄԹՆՈԼՈՐՏԻ ԱՂՏՈՏՄԱՆ	10
	ԱՂԲՅՈՒՐԻ	
3	ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ	11
4	ԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՈՒԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ	12
	ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	
5	ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ	13
	ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ	
6	ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՍԹԱ –Ի ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ (ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ)	16
	ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ	
7	ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆՀ ԱՇՎԱՐԿԻ	17
	ԿԱՏԱՐՈՒՄԸ	
8	ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	17
9	ՏԱՐԱԾՔԻ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	18
	ՈՐՈՇՈՂ ՕԴԵՐԵՎՈՒԹԱՔԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ	
10	ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՑՆՈՂ	19
	ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ	
11	ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ	20
	ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՆԵՐԿԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎՄԻՆՉԵՎ ՍԹԱ-ԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ	
	ԺԱՄԿԵՏԸ	
12	ԱՆՇԱՐԺ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏ	21
	ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ «ԻԶԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ	
	(ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ) ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	
13	ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ	22
	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱ-	
	ՑՈՒՄ	
14	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ	23
	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԵՎ ՍԹԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ	
	ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	24
	<i>Հավելումներ</i>	
	<i>Մեքենայական հաշվարկ</i>	25
	<i>Տվյալներ տարածքի կլիմայական պայմանների մասին</i>	52
	<i>Տվյալներ տարածքի ֆոնային կոնցենտրացիաների մասին</i>	53
	<i>Ռեյլեֆիզոքոթակցի հաշվարկ</i>	54

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի նպատակն է որոշել «Իջևանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ կողմից արտանետված վնասարար նյութերի աղտոտվածության աստիճանը և հաշվարկել մթնոլորտն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումները

Սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 27.12.2012թ N1673 –Ն «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի նորմատիվների մշակման և հաստատման կարգը, ըստ որի ուժը կորցված է ճանաչվել ՀՀ կառավարության 1999թ մարտի 30-ի և 2008թ օգոստոսի 21-ի N953-Ն որոշումները:

Սահմանային թույլատրելի արտանետումների նախագիծը մշակվել է համաձայն հետևյալ նորմատիվային փաստաթղթերի պահանջարկի՝

- ԳՈՍՏ 17.2.3.78 «Բնապահպանություն», «Մթնոլորտ», Արդյունաբերական ձեռնարկություններում աղտոտող նյութերի թույլատրելի արտանետումների կանոնների իրականացում;
- Ս. Ն. 369 – 74 «Մթնոլորտային արտանետումների նորմավորման ամանակավոր մեթոդիկա»;
- Բն. Փ. – 86 , Մթնոլորտում ձեռնարկության կողմից արտանետվող վնասակար նյութերի կոնցենտրացիաների հաշվական մեթոդիկա;

ՍԹԱ ն գիտա-տեխնիկական նորմատիվ է, որն հաստատվում է յուրաքանչյուր աղբյուրի և արտանետվող յուրաքանչյուր նյութի համար, ձեռնարկությունների արտադրական գործունեության վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա սահմանափակելու նպատակով:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Իջևանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ իր արտադրական գործունեությունը իրականացնում է ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքից հյուսիս- արևմուք գտնվող Ազատամուտ գյուղում: Ընկերության կողմից շահագործվող բենտոնիային կավի հանքավայրը գտնվում է գործարանից 10կմ հեռավորության վրա՝ Սարիգյուղի մոտ:

Արտադրական ողջ գործունեությունը ծավալվում է երկու արտադրական հրապարակի վրա: Ընկերությունը գործում է 1970 թվականից:

**«Իջևանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ
պետական ռեզիստրում գրանցվել է՝ 22. 07. 1996թ. ;
գրանցման համարն է՝ թիվ 67.130.193**

**Ընկերության հասցեն է՝
ՀՀ Տավուշի մարզ, գյուղ Ազատամուտ**

**«ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ ՕՊՕ – Ի
ՀԱՇՎԱՐԿ**

Համաձայն ՀՀ կառավարության 2012թ. Դեկտեմբերի 27- ի N1673 որոման 2-րդ կետի 3-րդ ենթակետի սահմանային թույլատրելի արտանետումները սահմանվում են այն տնտեսվող սուբյեկտների համար, որոնք ունեն այնպիսի աղբյուրներ, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված ՕՊՕ -ն մեկ տարում գերազանցում է երկու միլիարդ խոր. մետր չափանիշը կամ վարկյանում գերազանցում է երկու հազար խորանարդ մետր չափանիշը:

Այն կազմակերպությունները, որոնք ունեն մթնոլորտային արտանետումների անշարժ աղբյուրներ նրանց նախագծային առավելագույն արտանետումները պետք է բավարարեն հետևյալ պայմանը՝

$$O_{\text{արտ}} = \sum_i^n U_i U_{\text{ԹՎ}_i} > 2. \text{ մլրդ. խոր. մ/տարի};$$

Որտեղ՝ ՕՊՕ –ն օդի պահանջվող տարեկան օգտագործումն է :

Ա_i-ն I-րդ նյութի տարեկան առավելագույն արտանետումն է ըստ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հաստատված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ նախագծի մգ/մ³;

ՄԹՎ_i-ն i—դ նյութի միջին օրական ՄԹԽ է մգ/մ³:

Ընկերության կողմից մթնոլորտ է արտանետվում՝

Անօրգանական փոշի (SiO₂= 20-50%) – 122,04տոննա;

Ածխածնի օքսիդ – 34,06տոննա;

Ազոտի երկօքսիդ – 8,92տոննա;


Ածխաջրածիններ – 0,80տոննա;


Կախյալ մասնիկներ - 0,5924տոննա;

Մանգանի օքսիդներ – 0,00028տոննա:

$$O_{\text{ՊՕ}} = (122,04 \times 10^9) : 0,1 + (34,06 \times 10^9) : 3 + (8,92 \times 10^9) : 0,04 + (0,80 \times 10^9) : 1 +$$

$$0,0028 \times 10^9) : 0,01 + (0,5924 \times 10^9) : 0,15 = 1459,5 \text{ մլրդ. խոր. մ/տարի};$$





2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՄԹՆՈԼՈՐՏԻ ԱՂՏՈՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

«Իջևանի Բնտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ բենտոնիտային կավի հանքավայրում իրականացվում է բենտոնիտային կավի արդյունահանման աշխատանքներ: Ընկերությունն ունի մթնոլորտի աղտոտման գործընթացին մասնակցող հետևյալ արտադրամասերը՝

1. Բենտոնիտային կավի հանքավայր;
2. Բենտոնիտային փոշու արտադրության արտադրամաս;
3. Բենտոնահատիկների (գրամուլների) արտադրության տեղամաս;
4. Մեխանիկական արտադրամաս;

1. Բենտոնիտային կավի հանքավայր:

Հանքիցբենտոնիտային կավի(28-30% խոնավությամբ)արդյունահանումը իրականացվում է ԵՕ 4/24 մակնիշի 1մ³կովշիտարադությամբ 1էքսկավատորի միջոցով: Հանքում պարբերաբար աշխատում են նաև կրազ մակնիշիի ինքնքթափ 8 ավտոմեքենա, որոնց օգնությամբ հումքը տեղափոխվում է գործարանի տարածք:

Հանքում աշխատում են նաև 2 T-170 և T -330 մակնիշների բուլդոզերներ:

Նշված աշխատանքների ընթացքում առաջանում և մթնոլորտ է արտանետվում անօրգանական փոշի:

Մեքենաներն աշխատում են դիզելային վառելանյութով, որոնց արտանետումները աշվարված են մեքենաների ներքին այրման շարժիչներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութեր՝ ածխածնի օքսիդի, ազոտի երկօքսիդի,կախյալ մասնիկների ածխաջրածինների համար:

Դիզելային վառելանյութի տարեկան է 100տոննա:

Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի հաշվարի մեթոդիկա» ժողովածուի հիման վրա: Ավտոմեքենաներից առաջացած արտանետումները հաշվելու համար առաջարկված են արտանետումների հետևյալ գործակիցները՝ ծախսվող վառելիքի 1կգ –ի համար:

- Կոշտ մասնիկներ (մոխիր) - 2,9գ/կգ;
- Ածխածնի օքսիդ – 18,6գ/կգ;
- Ածխաջրասիններ – 8,1գ/կգ;
- Ազոտի օքսիդներ – 36,1գ/կգ

Արտանետված անօգանական փոշին ($\text{SiO}_2 = 20-50\%$) ֆոնային աղտոտվածությամբ հաշվարկելու համար, հաշվարկվել է նաև որպես չտարբերակված փոշի (կախյալ մասնիկներ):

2. Բենտոնիտային կավի արտադրություն:

Հումքը, նախնական կուտակման տեղամասից 24—30% խոնավությամբ տրվում է ջարդիչ – տեսակավորող ՇՄԸ -1198/20 սարք, որտեղ կատարվում է կավի մանրացում և տեսակավորում: Տեսակավորված հումքը այնուհետև ժապավենային փոխադրիչի միջոցով տեղափոխվում 1 ՇՄԸ-428 մակնիշի 2 չորացման թմբուկներ, որտեղ չորացվում է մինչև 8-10% խոնավությամբ և պահեստավորվում 35 տոննա նոսրիլոսներում:

Չորացման թմբուկները հազեցված են վեց ԼԿ – 15-6x800տիպի ցիկլոնային մարտկոցներով:

Չորացված տեսակավորված բենտոնիտը տրվում է գնդիկավոր 2 աղացներ, որոնց մեջ մանրացվում է մինչև 160միկրոն հատիկության, որը այնուհետև նստեցվում է ԼԿ – 15-2x1000ցիկլոնային մարտկոցներով և PF_1 և PF_2 թևավոր ֆիլտրերի միջոցով: Նստեցված փոշին պնեվմոտրանսպորտով, խողովակների միջոցով տրվում է հումքի պահեստ:

3. Բենտոնահատիկների (գրանուլների) արտադրության տեղամաս:

Բենտոնահատիկների ստացման համար տեղամասում տեղադրված են ԴԿ-52 մակնիշի քարմաղեր: Աշխատանքի ընթացքում առաջացած փոշին որսվում է ԼԿ – 15-2x400 ցիկլոնային մարտկոցներով:

Ընկերության տարածքում է գտնվում նաև մեխանիկական արտադրամասը, որտեղ տեղադրված են 15 հատ տարբեր մակնիշի մետաղների մշակման հաստոցներ, որոնցից աշխատում են միայն 9-ը և ԲԸ- 300 տիպի 2 եռակցման

ապարատ:Եռակցման աշխատանքների կատարման համար տարեկան օգտագործվում է 400կգ AHO – 4տիպի էլեկտրոդ:

Ընկերության կողմից տարեկան արտադրվում է 100հազ. տոննա արտադրանք, որից՝

- բենտոնափոշի– 80հազ. տոննա;
- բենտոնահատիկ (գրանուլներ) – 20հազ.տոննա:
- ընկերության կողմից օգտագործվող գազի տարեկան ծառը կազմում է՝2,5մլն.մ³:

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը, նրանց սահմանային թույլատրելի խտությունները, վտանգավորության դասը և արտանետումները տ/ տարի ներկայացված է աղ. 1 –ում:

ՍԹԱ –ի նորմատիվների հաշվարկի համար արտանետվող վնասակար նյութերի արտանետման աղբյուրների պարամետրերը, սարքավորումների քանակը, արտանետվող վնասակար նյութերի քանակները ներկայացված են աղ. 3 –ում, որը կազմված է ГОСТ 17. 2. 3.02-78 – ի համապատասխան:

Համաձայն սանիտարական դասակարգման ընկերությունը դասվում է V – րդ կարգի 50մ ՍՊԸ:

Տեխնոլոգիական գործընթացից միանգամյա արտանետումներ չկան:

3. ՄԹՆՈՒՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Սահմանային թույլատրելի առավելագույն միանգամյա խտությունները վերցրվել են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2 –ի թիվ 160 որոշման ցանկից:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.

Նյութի անվանումը	ՍԹԿ _{միև. կոեց} նգ/մ ³	Վտանգավորության դասը	Նյութերի արտանետումը, տ/տարի
1	2	3	4
Անօրգանական փոշի(SiO ₂ = 20- 50%)	0,3	3	122,04
Ածխածնի օքսիդ	5,0	4	34,06
Ազոտի օքսիդներ(վերահաշվածերկօքսիդի)	0,085	2	8,92
Ածխաջրածիններ	5,0	4	0,80
Կախյալ մասնիկներ(մոխիր)	0,5	3	0,29
Կախյալ մասնիկներ(մետաղական փոշի)	0,5	3	0,30
Կախյալ մասնիկներ(եռակցման աերոզոլ)	0,5	3	0,0024
Մանգանի օքսիդներ	0,01	2	0,0028
Ընդամենը			166,41

4. ԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԹՎԱՐԿՈՒՍԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Արտադրամասի (տեղամասի), աղբյուրների անվանումը	Նյութի անվանումը	Նյութի զարկայինան վանուը	Արտանետման պարբերականությունը	Արտանետման տևողությունը վրկ	Զարկայինարտանետուների տարեկան քանակները տոն
1	2	3	4	5	6

Ընկերության տեխնոլոգիական գործընթացներից զարկային արտանետումներ չեն առաջանում, այդ պատճառով աղյուսակ 2-ը չի լրացվում

**5. ՄԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԱՂՏՈՏՈՂ
ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ**

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Արտադրություն, արտադրամաս	Արտանետող նյութերի առաջացման աղբյուրները			Աշխատա- ժամերը տարում		Արտանետման Աղբյուրների անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը	
	Անվանումը	Քանակը		ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
		ՆՎ	Հ								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Բետոնիտային կավի հանքավայր	Հանք՝ Էքսկավատոր Ինքնաթափ ավտոմ. Բուլդոզեր	1	1	2200	-	Անկազ արտան.	Անկազմ. Արտան.	1	1	1	1
		1	1								
		8	8								
		2	2								
Բենտոնիտային փոշու արտա-դրամաս	Չորացման թմբուկ	1	1	7446	-	Խողովակ	խողովակ	1	1	2	2
		1	1	7446	-	Խողովակ	խողովակ	1	1	3	3
Մանրացման տեղամաս	Գնդիկավոր աղաց	1	1	3355	-	Խողովակ	խողովակ	1	1	4	4
Մանրացման տեղամաս	Գնդիկավոր աղաց	1	1	3335	-	Խողովակ	խողովակ	1	1	5	5
Բետոնահատիկների տեղամաս	Քարմաղ	1	1	6670	-	Խողովակ	խողովակ	1	1	6	6
Մեխանիկական արտադրամաս	Մետաղների մշակման հաստոցներ Եռակցման ապարատ	9	15	1300	-	Խողովակ	խողովակ	1	1	7	7
		2	2								
Թափոնների կուտակման հրապարակ	Լցակույտ	1	1	4000	-	Անկազմ. Արտանետ.	Անկազմ. Արտանետ.	1	1	8	8

Աղբյուրի բարձրությունը, մ		Աղբյուրի տրամագիծը, մ ²		Գազատաօդային խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում						Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզում, մ			
				Արագությունը, մ/վրկ		Ծավալը, մ ³ /վրկ		Ջերմաստիճանը, °C				Կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի, կամ գծային աղբյուրի 1-ին ծայրը		գծային աղբյուրի 2-րդ ծայրը	
ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	X ₁	Y ₁	X ₂	Y ₂
13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28
5,0	5,0	100,0	100,0	5,00	-	39270	-	22,0	-	1	-	1700	1000	1750	1050
30,0	30,0	0,8	0,8	15,52	-	7,8	-	70,0	70,0	2	-	1010	1020	-	-
30,0	30,0	0,8	0,8	15,2	-	7,8	-	70,0	70,0	3	-	1250	995	-	-
30,0	30,0	0,6	0,6	27,58	-	7,8	-	40,0	40,0	4	-	940	1050	-	-
30,0	30,0	0,6	0,6	27,58	-	7,8	-	40,0	40,0	5	-	980	1080	-	-
30,0	30,0	0,8	0,8	18,03	-	9,0	-	22,0	22,0	6	-	1060	980	-	-
12,0	12,0	0,5	0,5	12,73	-	2,5	-	22,0	22,0	7	-	1150	1130	-	-
5,0	5,0	100,0	100,0	5,00	-	39270	-	22,0	22,0	8	-	500	800	600	900

Գազերը մաքրող սարքերի անուն	Մաքրվող նյութերը		Մաքրման միջին շահագործման աստիճանը		Աղբյուրի Կարգաթիվ	Նյութի անվանումը	Արտանետվող վնասակար նյութեր				ՍԹԱ հասնելու տարին
	Ապահովվածության գործակից, %		Մաքրման առավելագույն չափը, %				ՆՎ		Հ/ՍԹԱ/		
	ՆՎ	Հ	ՆՎ	Հ			գ/վրկ	տ/տ	գ/վրկ	տ/տ	
	29	30	31	32			34	36	37	39	
-	-	-	-	1	Անօրգանական փոշի Ազոտի երկօքսիդ Ածխածնի օքսիդ Ածխաջրածիններ Կախյալ մասնիկներ (մոխիր)	0,22 0,45 0,23 0,1 0,036	1,74 3,56 1,82 0,80 0,29	0,22 0,45 0,23 0,1 0,036	1,74 3,56 1,82 0,80 0,29	2013թ.	
ԼՀ-15-6x800	Անօրգանական փոշի	92	2	Անօրգանական փոշի Ածխածնի օքսիդ Ազոտի երկօքսիդ	1,80 0,60 0,10	48,50 16,12 2,68	1,80 0,6 0,1	48,50 16,12 2,68	2013թ.		
ԼՀ-15-6x800	Անօրգանական փոշի	92	3	Անօրգանական փոշի Ածխածնի օքսիդ Ազոտի երկօքսիդ	1,8 0,6 0,1	48,5 16,12 2,68	1,8 0,6 0,1	48,5 16,12 2,68	2013թ.		
ԼՀ-15-2x1000	Անօրգանական փոշի	99	4	Անօրգանական փոշի	0,30	3,60	0,30	3,60	2013թ.		
ԼՀ-15-2x1000	Անօրգանական փոշի	99	5	Անօրգանական փոշի	0,30	3,60	0,30	3,60	2013թ.		
ԼՀ-15-4x500	Անօրգանական փոշի	92	6	Անօրգանական փոշի	0,56	13,50	0,56	13,50	2013թ.		
-	-	-	7	Կախյալ մասնիկներ (մետաղական փոշի) Կախյալ մասնիկներ (եռակցման աներոզոլ) Մանգանի օքսիդներ	0,064 0,0005 0,0002	0,3 0,0024 0,0028	0,064 0,0005 0,0002	0,3 0,0024 0,0028	2013թ.		
-	-	-	8	Անօրգանական փոշի	0,15	2,7	0,15	2,7	2013թ.		

Որտեղ ՆՎ՝ ներկա վիճակ, Հ՝ հեռանկարային

6. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՍԹԱ-Ի ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ

/ԶԱՓԱՔԱՆԱԿԻ/ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքների՝ ՍԹԱ – ի հաշվարկի ելակետային տվյալները հաշվարկվել են ըստ 78 17.2.3.02-78-ի, որը բերված է 2.1աղյուսակում:

Անչափելիության գործակիցը

նդունվում է՝ ա) գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության աերոզոլների համար 1, բ)խոշոր դիսպերսության համար, փոշեորսման բացակայության դեպքում 3, գ)փոշեորսման 80 – 85% դեպքում՝ 2,5, դ) փոշեորսման 90 – 95% դեպքում՝ 2:

Մթնոլորտային օդի ներկա աղտոտվածությունը

Գետնամերձ կոնցենտրացիաների համակարգչային հաշվարկների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել արտանետվող նյութերի բնակավայրում ֆոնային աղտոտվածության տվյալները: Նշված տվյալները վերցրվել են ՀՀ բնապահպանության նախարարության կայք էջից ըստ բնակչության թվաքանակի, ըստ որի ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի մթնոլորտ աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները հետևյալն են՝

Ֆոնային կոնցենտրացիաները մգ/մ³

Փոշի - 0,3

Ծմբի օքսիդ - 0,05

Ազոտի երկօքսիդ – 0,015

Ածխածնի օքսիդ – 0,8

7. ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման մեքենայական հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարայինի համար ցույց է տալիս, որ արտանետումների ցառաջացած գետնամերձ կոնցենտրացիաների արժեքները փոքր են ՍԹԿ-ի արժեքներից, ուստի փաստացի արտանետումների արժեքներն առաջարկվում են որպես սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ: Հաշվի առնելով այն, որ արտանետման աղբյուրներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակները չեն գերազանցում ՍԹԱ – ի նորմատիվները, ուստի արտանետումները նվազեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում:

Հաշվարկների վերլուծության հիման վրա առաջարկվում են բոլոր նյութերի համար նախատեսված արտանետումները ընդունել որպես սահմանային թույլատրելի:

8. ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԻԸ

«Իջևանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ գետնամերձ շերտի աղտոտման աստիճանը որոշվել է վնասակար նյութերի ցրման հաշվարկների անալիզի արդյունքների հիման վրա: Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա: Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, օգտագործելով «Ռադուգա» ծրագիրը,¹ և 2 աղյուսակներում բերված տվյալների հիման վրա:

Հաշվարկներով որոշվում են՝

- հաշվարկային կետի կոորդինատները, մ;
- վնասակար արտանետումների մերձգետնային աղտոտությունները ՍԹԿ-ի մասով;
- ջահիառանցքի ուղղությունը;

- քամու արագությունը մ/վ-ով, որի առկայության դեպքում հաշվարկային կետում մերձգետնյա կոնցենտրացիան հասնում է ամենամեծ արժեքին:

9. ՏԱՐԱԾՔԻ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՐՈՇՈՂ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

Ցրման պայմանները որոշող օդերեվուֆաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակուն, տրամադրված «Հայաստանի հիդրոօդերեվուֆաբանության և մոնիտորինգի պետական ծառայությա» ՊՈԱԿ կողմեց:

ԱՂՅՈՒՍԱԿ 5

Հh	Բնութագրիանվանումը	Մեծությունը
	1	2
1	Մթնոլորտի շերտաբաշխումից կախված գործակիցը, (A)	200
2	Տեղանքի ռելիեֆի գործակից	1,32
3	Օդի միջին տարեկան ջերմաստիճանը	10,8°C
4	Ամենացուրտ ամսվա օդի միջին ջերմաստիճանը	0,6°C
5	Ամենատաք ամսվա օդի միջին ջերմաստիճանը	21,2°C
6	Ամենատաք ամսվա ժամը 15-ի օդի միջին ջերմաստիճանը	26,07°C
7	Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը	39,0°C
8	Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը	-19,0°C
9	Ձմեռվա շրջանի տևողություն (0°C – իցցածր)	151օր
10	Քամու ուղղության և անդորի կրկնության (տարեկան%)	
11	Հյուսիս	37
12	Հյուսիս արևելք	3
13	Արևելք	1
14	Հարավ- արևելք	2
15	Հարավ	45
16	Հարավ- արևմուտք	8
17	Արևմուտք	2
18	Հյուսիս- արևմուտք	13
19	Քամու արագությունը . որի գերազանցման կրկնությունը կազմում է 5%	6մ/վրկ

10. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 5.

Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրականացման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումները		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը միջոցառումն իրականացնելուց հետո	
		գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի
ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՓՈՇԻ(SiO₂=20-50%)					
1	2013թ.	0,22	1,74	0,22	1,74
2	2013թ.	1,80	48,5	1,80	48,5
3	2013թ.	1,80	48,5	1,80	48,5
4	2013թ.	0,30	3,60	0,30	3,60
5	2013թ.	0,30	3,60	0,30	3,60
6	2013թ.	0,56	13,40	0,56	13,40
8	2013թ.	0,15	2,70	0,15	2,70
Ընդամենը	2013թ.	5,13	122,04	5,13	122,04
ԱՍԽԱԾՆԻ ՕՔՍԻԴ					
1	2013թ.	0,23	1,82	0,23	1,82
2	2013թ.	0,60	16,12	0,60	16,12
3	2013թ.	0,60	16,12	0,60	16,12
Ընդամենը	2013թ.	1,43	34,06	1,43	34,06
ԱԶՈՏԻ ՕՔՍԻԴՆԵՐ (ՎԵՐԱՀԱՇՎԱԾ ԵՐԿՕՔՍԻԴԻ)					
1	2013թ.	0,45	3,56	0,45	3,56
2	2013թ.	0,10	2,68	0,10	2,68
3	2013թ.	0,10	2,68	0,10	2,68
Ընդամենը	2013թ.	0,65	8,92	0,65	8,92
ԿԱԽՅԱԼ ՄԱՍՆԻԿՆԵՐ					
1	2013թ.	0,036	0,29	0,054	0,29
7	2013թ.	0,064	0,3	0,064	0,3
7	2013թ.	0,0005	0,0024	0,0005	0,0024
Ընդամենը	2013թ.	0,10	0,5924	0,10	0,5924
ԱՍԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ					
1	2013թ.	0,10	0,80	0,10	0,80
ՄԱՆԳԱՆԻ ՕՔՍԻԴՆԵՐ					
7	2013թ.	0,0002	0,0028	0,0002	0,0028

Հաշվի առնելով, որ ձեռնարկության արտանետման աղբյուրներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակները չեն գերազանցում ՍԹԱ – ի նորմատիվները, այդ պատճառով արտանետումները նվազեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում, հետևաբար աղյուսակ 5.-ը լրացվում է համաձայն փաստացի չափաքանակների, որոնք առաջարկվում են որպես ՍԹԱ նորմատիվներ:

11. ԱՆՇԱՐԺ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐ ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ՝«ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ /ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ/ԱՐՏԱՆԵՏՄԱՆԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 6.

Աղտոտող նյութը	Ընդհանուրարտանե տումը		Աղտոտող նյութը	Ընդհանուրարտանե տումը	
	գ/վրկ	տ/տարի		գ/վրկ	տ/տարի
Անօրգանական փոշի (SiO ₂ = 20-50 %)	5,13	122,04			
Ածխածնի օքսիդ	1,43	34,06			
Առտի օքսիդներ(երկօքսիդի հաշվարկով)	0,65	8,92			
Կախյալ մասնիկներ	0,1005	0,5924			
Ածխաջրածիններ	0,10	0,80			
Մանգանի օքսիդներ	0,0002	0,0028			
Ընդամանը		166,41			

**12. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Հաշվի առնելով արտադրության առանձնահատկությունները և վնասակար նյութերի բնութագրերը, սանիտարահիգիենիկ նորմատիվների հսկողությունը դրվում է ընկերության տնօրենի վրա:

Անհրաժեշտ է՝ հսկողություն սահմանել արտանետումների այն աղբյուրների նկատմամբ, որոնք ավելի մեծ բաժին ունեն մթնոլորտի աղտոտման գործում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում արտանետումների նվազեցման ուղղությամբ տարվող միջոցառումները կրում են կազմակերպչական – տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները: Մթնոլորտում արտանետումների նկատմամբ հսկողություն սահմանելու համար առաջարկվում է օգտվել հետևյալ ձեռնարկներից/3-5/: Երբ ընկերությանը տեղյակ է պահվում սպասվող օդերևութաբանական բարենպաստ պայմանների մասին, առաջարկվում է արտանետումների քանակների նվազեցման ուղղությամբ կիրառել հետևյալ միջոցառումները՝

- Թույլ չտալ սարքավորումների գերբեռնված աշխատանք;
- խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին;
- վնասակար նյութերի արտանետումների՝ փոշու քանակի մեծացման դեպքում ժամանակավորապես դադարեցնել աշխատանքները:

**13. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ
ԵՎ ՍԹԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

Քանի որ ՍԹԱ կատարման համար պատասխանատու է կազմակերպությունը, ապա արտանետումների հետևում և ստուգում է բնությանպահպանության համար պատասխանատու անձը՝ ընկերության տնօրենը:

Վնասակար նյութերի արտանետումների քանակը որոշվում է այդ նյութերի կոնցենտրացիաների և գազերիօդային խառնուրդների ծավալների ուղղակի չափման մեթոդներով: Ուղղակի չափման մեթոդների կիրառման կամ օգտագործման անհնարինության դեպքում թույլատրվում է կիրառել տեսական հաշվարկի մեթոդը: Տվյալ դեպքում կիրառվում է տեսական հաշվարկի մեթոդը:

Անբարենպաստ կլիմայական պայմանների դեպքում , բնակչության առողջության համարվնասակար մթնոլորտի աղտոտման ընթացքում ձեռնարկությունը պարտավոր է իջեցնել վնասակար նյութերի արտանետումներն, ընդհուպ մինչև աշխատանքի դադարեցումը:

Եթե վթարի արդյունքում գերազանցվում է ՍԹԱ նորմատիվը, ապա կազմակերպությունը պարտավոր է այդ մասին հայտնել մթնոլորտի պահպանությունը վերահսկող մարմնին ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչություն և ձեռնարկել վնասակար նյութերի արտանետումների սահմանափակման անհապաղ միջոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտում արտադրական արտանետումների նորմավորման ժամանակավոր ձեռնարկ. – Մոսկվա, 1981թ:
2. Սանիտարական նորմաներ արտադրական ձեռնարկությունների նախագծման համար. – Ս.Ն. 245-71 Մոսկվա, Շինհրատարակչություն, 1972թ.:
3. Ս.Ն. 12. 1. 005.-76. Օդը աշխատանքային գոտում:
4. Ս.Ն 17.2.3.02.-78. Բնապահպանություն: Մթնոլորտ:
5. Ձեռնարկության արտանետումներում վնասակար նյութերի մթնոլորտում ցրման հաշվարկային ցուցումներ. – Ս.Ն. 369-74 Մոսկվա, Շինհրատարակչություն, 1975թ.
6. OHD-86. Ձեռնարկության արտանետումներում վնասակար նյութերի խտությունների հաշվարկման ձեռնարկ. – Լենինգրադ, Հիդրոմետ հրատարակչություն, 1987թ.:
- 7.«Տարբեր ձեռնարկությունների կողմից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման ձեռնարկ». – Լենինգրադ, Հիդրոմետ հրատարակչություն 1986թ.:
8. ՀՀ կառավարության 27.12.2012թ N1672- ն «մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի նորմատիվների մշակման և հաստատման կարգ»:
9. ՀՀ կառավարության 2005թ հուլիսի 25-ի N91 որոշման հիման վրա:

Հաշվարկը կատարվել է
 ՀՀ բնապահպանության նախարարության
 «Շրջակա միջավայրի վրա ներգործության
 մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ մասնագիտացված



ստորաբաժանի կողմից
 ՊՈԱԿ տնօրեն
 Ա. Գևորգյան

2013.10.11

ИСХОДНЫЕ ДАННЫЕ

Управляющие параметры расчета и характеристики объекта
 Объект: АООТ «Иджеванский комбинат бентонит»

Таблица 1

: Число источников	:	8	:
: Число рассматриваемых вредных веществ	:	6	:
: Географическая широта местности (град.)	:	40	:
: Температура	:	22.0	:
: Районный коэффициент	:	200	:
: Шаг перебора направления ветра	:	10	:
: Характеристика перебора направления ветра	:	автоматный	:
: Скорость ветра	:	6	:
: Число вкладов	:		:
: Число максимальных концентраций	:		:
: Угол	:	90	:
: Число групп суммирования	:	0	:
: Константа целесообразности проведения расчета	:	0.1	:

Կատարող՝ գլխավոր մասնագետ Ա. Առաքելյան

<<РАДУГА>>

2013.10.11

ПАРАМЕТРЫ ИСТОЧНИКОВ

Объект: АООТ «Иджеванский комбинат бентонит»

ТАБЛИЦА 7 СТАНИЦА 1

КОД	ВЫСОТА	ТОЧЕЧНОГО	ДИАМЕТР	ПАРАМЕТРЫ ГАЗОВОЗДУШНОЙ СМЕСИ			КООРДИНАТЫ				УГОЛ МЕЖДУ	УЧЕТ
:	:	ИЛИ ПЛОС-	:	СКОРОСТЬ	ОБЕМ	ТЕМПЕРАТУРА	ЛИНЕЙНОГО ИЛИ ЛИНИ	ИЛИ ЛИНИИ ЦЕНТРА	НА СЕВЕР	НАПРАВЛЕНИЯ	РЕЛЬЕФА	:
:	:	КОСТНОГО	:	:	:	:	ИЛИ ЦЕНТРА ПЛОСКОСТ.	ПЛОСКОСТНОГО	:	:	:	:
Н ИСТ.	Н (М)	Д	W (М/С)	V (М, КУБ/С)	T (ГРАД.С)	X1 (М)	Y1 (М)	X2 (М)	Y2 (М)	С (ГРАД)	РН	:
1	5.0	100.00	5.0000	39269.9082	22.0	1700	100	1750	1050	90	1.32	:
2	30.0	0.80	15.5176	7.8000	70.0	1010	1020	-	-	90	1.32	:
3	30.0	0.80	15.5176	7.8000	70.0	1250	995	-	-	90	1.32	:
4	30.0	0.60	27.5869	7.8000	40.0	940	1050	-	-	90	1.32	:
5	30.0	0.60	27.5869	7.8000	40.0	1060	980	-	-	90	1.32	:
6	30.0	0.80	18.0376	9.0667	40.0	920	1050	-	-	90	1.32	:
7	12.0	0.50	12.7324	2.5000	22.0	1150	1130	-	-	90	1.32	:
8	5.0	100.00	5.0000	39269.9082	22.0	500	800	600	900	90	1.32	:

<<РАДУГА>>

2013.10.11

НАРАКТЕРИСТИКА ВЫБРОСОВ

ОБЪЕКТ: АООТ»Иджеванский комбинат бентонит»

ТАБЛИЦА 8 СТРАНИЦА 1

:КОД ВЕЩ-ВА:НАИМЕНОВАНИЕ (ШИФР) ВЕЩ-ВА:ПДК (КГ/М, КУБ) :КОЕФ.ОСЕДАНИЯ: ЧИСЛО ИСТОЧНИКОВ:

: 980 Пыль неорган. (SiO2-20-50%) 0.300000 2.0 7 :
:

:Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :

1 0.2200 2 1.8000 3 1.8000 4 0.3000 5 0.3000 6 0.5600 8 0.1500

:КОД ВЕЩ-ВА:НАИМЕНОВАНИЕ (ШИФР) ВЕЩ-ВА:ПДК (КГ/М, КУБ) :КОЕФ.ОСЕДАНИЯ: ЧИСЛО ИСТОЧНИКОВ:

: 322 Оксид углерода 5.000000 1.0 3 :
:

:Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :

1 0.2300 2 0.6000 3 0.6000

:КОД ВЕЩ-ВА:НАИМЕНОВАНИЕ (ШИФР) ВЕЩ-ВА:ПДК (КГ/М, КУБ) :КОЕФ.ОСЕДАНИЯ: ЧИСЛО ИСТОЧНИКОВ:

: 200 Окслы азота (в пер на двуокись) 0.085000 1.0 3 :
:

:Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :

1 0.4500 2 0.1000 3 0.1000

:КОД ВЕЩ-ВА:НАИМЕНОВАНИЕ (ШИФР) ВЕЩ-ВА:ПДК (КГ/М, КУБ) :КОЕФ.ОСЕДАНИЯ: ЧИСЛО ИСТОЧНИКОВ:

: 982 Взвешенные вещества 0.500000 2.0 8 :
:

:Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :Н ИСТ:МОЩ (Г/С) :

1 0.2560 7 0.0645 2 1.8000 3 1.8000 4 0.3000 5 0.3000 6 0.5600 8 0.1500

: КОД ВЕЩ-ВА : НАИМЕНОВАНИЕ (ШИФР) ВЕЩ-ВА : ПДК (КГ/М, КУБ) : КОЕФ. ОСЕДАНИЯ : ЧИСЛО ИСТОЧНИКОВ :

: 310 Углеводороды 5.000000 1.0 1 :
:

: Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) :

1 0.1000

ОБЪЕКТ: АООТ «Иджеванский комбинат бентонит»

ТАБЛИЦА 8 СТРАНИЦА 2

: КОД ВЕЩ-ВА : НАИМЕНОВАНИЕ (ШИФР) ВЕЩ-ВА : ПДК (КГ/М, КУБ) : КОЕФ. ОСЕДАНИЯ : ЧИСЛО ИСТОЧНИКОВ :

: 143 Оксиды марганца 0.010000 1.0 1 :
:

: Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) :

7 0.0002

<<РАДУГА>>

2013.10.11
РЕЗУЛЬТАТЫ РАСЧЕТА

Объект: АООТ«Иджеванский комбинат бентонит»

Распределение максимальных наземных
концентраций (без фона)

Пыль неорган.(SiO₂-20-50%) Таблица 9 Станица 2

A=200 ТВ= 22.0 град.С U*= 6 m/s
выбор шага направления ветра = 10 град.
отображение рельефа каждому источнику

характеристика выбрасываемых веществ

```

:-----:
:КОД ВЕЩЕСТВА : 980 :
:НАИМЕНОВАНИЕ (ШИФР) ВЕЩЕСТВА :Пыль неорган.(SiO2-20-50%) :
:ПРЕДЕЛЬНО ДОПУСТ.КОНЦЕНТР. (МГ/М, КУБ) : 0.3000 :
:КОЭФИЦИЕНТ ОСЕДАНИЯ ВЕЩЕСТВА : 2.0 :
:ФОНОВАЯ КОНЦЕНТРАЦИЯ : НЕ УЧИТЫВАЕТСЯ :
:-----:
    
```

